ՈԳԻՆԵՐ, ՔԱՇԿԷՐ

Նախնիների հոգիների պաշտամունքից, որը ծագած պիտի լինի տոհմատիրական հասարակարգի կազմավորման սկզբներում, բխում է նաև Զանգեզուրի հայերի մեջ խորը տարածված այն հավատը, որ սրբերի՝ նահատակների, մարտիրոսների և կենդանի ժամանակ առաքինի կյանքով ապրածների հոգիները հովանավոր են հանդիսանում ոչ միայն իրենց հարազատների, այլ առհասարակ բոլոր մարդկանց[103] առողջության, հաջողության և բարեկեցության գործերին։ Այդ զորությունն ունեն և նրանց գերեզմանները և բոլոր այն վայրերը, որտեղ նրանք ըստ ավանդության ապրել են կամ գործել։ Այդ վայրերը վեր են ածվել խաչէրի՝ ուխտատեղիների[104]։ Սովորաբար նրանց մասին պատմածների իրականությանը համապատասխան լինելը շատ կասկածելի է, օրինակ՝ Հին Գորիսում պաշտված Ճգնավորի կամ Փիրդուդանի կամ լեռների գագաթներին ամփոփված սրբերի մասին պատմածները, որ միշտ աղոտ, շփոթ ավանդություններ են։

Այդ սրբերի հոգիներն, ըստ զանգեզուրցու հավատալիքի, կարծես սավառնելիս լինեին որոշ վայրերի շուրջը, որտեղ առանձնապես ազդու էր նրանց զորավոր հովանավորությունը։ Եթե նրանք որևէ պատճառով սրանից-նրանից վշտացած են եղել և պատժել են, ուղարկելով հիվանդություն, ձախորդություն, արտերի կամ այգիների անբերրիություն, անասունի ցավ կամ կոտորած, կարելի էր նրանց սիրաշահել, ջերմեռանդ աղաչանքներով, համբուրելով նրանց մասունքները, շոշափած իլերը կամ նրանց նվիրված պատկերներն ու խաչէրը, վառած ճրագների լույսով նրանց լուսի մեջ պահելով և մատաղավ նրանց կերակրելով։ Այդ սրբերից յուրաքանչյուրին նվիրված էին հատուկ օրեր։ Ամեն մեկին ցույց էր տրվում համապատասխան եղանակով մեծարանք։ Այդ պաշտամունքի անհատական բնույթը թույլ էր տալիս եզրակացնելու, որ այդ պաշտամունքը սկիզբ է առել այն պատմական աստիճանին, երբ որոշ անհատներ սկսել են համայնքի մեջ հատուկ դեր խաղալ և խոշոր հեղինակություն վայելել։

Շատ ավելի նախնական մտածողության հետքեր են պահպանվել չար ոգիների պաշտամունքի մեջ, որը հին Զանգեզուրում աշխարհըմբռնման մեջ, նույնպես և այլ հայաբնակ գավառներում, շատ լայն, կարելի է ասել՝ նույնիսկ գերադաս տեղ է բռնում և տեղափոխում է մեզ այն դարերը, երբ մարդս դեռ շատ էր ընկճված շրջակա բնության և մարդկային հասարակության ճնշման ներգործության տակ և նրա հոգեկան աշխարհի մեջ իշխում էր վախը։ Այդ չար ոգիները Զանգեզուրում սովորաբար կոչվում էին քաշկէր, ճնարքնէր։ Նրանց չեն ուղղել աղոթքներ, որևէ մաղթանք, նրանք երբեք որևէ բարություն չէին անի մարդուն, նրանց օգնությանը մարդը երբեք չէր դիմում, այլ միայն միջոցներ էր ձեռք առնում նրանց չար միջամտությունից ազատ մնալու, նրանց՝ իրանից հեռու պահելու և նրանց պատճառած չարիքը վերացնելու համար։ Նրանց վերաբերմամբ մարդու բռնած դիրքը նպատակ ունի ոչ թե այս կամ այն գործն անել տալը, այլ, ընդհակառակը՝ չանել տալը։ Բացառիկ դեպքերում

---

103 Նույնիսկ այլակրոնների։

104 Այդ ուխտատեղիներից հայտնի էին Գորիսում Ճգնավորի, Արծվանիկում՝ Կարմիր վանքի տակ եղած Ճգնավորի, Ծաղկեձորի ս. Կակոփի՝ քարայրներում գտնվող, այնտեղ ապրող սրբերի գերեզմանները։